Զորավար Անդրանիկի ծննդյան
150-ամյակի առթիվ

ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՕԶԱՆՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ (1919 – 1927 թթ.)

ՔՆԱՐԻԿ ԱՎԱԳՅԱՆ

1918 թ. մայիսի 28-ին Հայաստանի անկախ հանրապետության հռչակումը և Բաթումի դաշնագրով (1918 թ. հունիսի 4) Թիֆլիսի հայ ազգային խորհրդին պարտադրված այդ անկախության ամրագրումը վստահություն չէր ներշնչում Զորավար Անդրանիկ Օզանյանին:

Լինելով փորձառու, հեռատես ու խորագետ ռազմական գործիչ՝ Անդրանիկը գիտակցում էր, որ Արևմուտքի երկրների (Անգլիա, ԱՄՆ, Գերմանիա) թելադրանքով թուրքերի կողմից հայերին անկախություն պարտադրելն իրատեսական և անկեղծ չէ, այլ նպատակ է հետապնդում Հայաստանը դուրս բերել Ռուսաստանի հովանավորությունից և վերածել «անտեր ու անպաշտպան գառնուկի մը. այլևս ժամանակի հարց էր թե շրջանի ո՞ր մեկ բորենին ե՞րբ պիտի հարձակեր անմեղ գառնուկին վրա, զայն վերջնականապես հոշոտելու համար...»[1]: Միևնույն ժամանակ, ինչպես ճշմարտացիորեն վերլուծում է Ա. Չելեպյանը, «Պատերազմի վերջավորության, Իթթիհատի ղեկավարները պատճառներ ունեին մտահոգվելու, որովհետև պարտված ըլլալով կրնային դատվիլ որպես պատերազմի ոճրագործներ: Այդ նկատումով անոնք ստեղծած էին փոքրիկ Հայաստան մը, իրենց սահմաններեն դուրս, խաբելու համար համաշխարհային կարծիքը և ծածկելու Մեծ Ոճիրը»[2]:

---

[1] *Ա. Չելեպյան. Զորավար Անդրանիկ և հայ հեղափոխական շարժումը. Կենսագրական ակնարկ, Երևան, 1990, էջ 563–564:*

[2] *Նույն տեղում, էջ 593:*

Բաթումի դաշնագրի պայմաններից էր նաև այն, որ Անդրանիկը պետք է ցրեր իր բանակը և հեռանար Հայաստանի սահմաններից: «Թուրքերը ապազինվա՛ծ - *Հայաստան մը կ'ուզեին, և* առա՛նց Անդրանիկի*...»*[3]*:*

Ստեղծված պայմաններում Անդրանիկի ղեկավարությամբ Հայկական առանձին հարվածող զորամասը, որը կազմակերպվել էր Էրզրումի անկումից հետո՝ 1917 թ. մարտի 12-ից, դադարել է կապ ունենալ Հայաստանի Առաջին Հանրապետության հետ և գործել է անկախ՝ շարունակելով Կովկասի, ապա՝ Զանգեզուրի պաշտպանությունը, հակառակ որ անգլիացիները ջանք չեն խնայել Անդրանիկին Անդրկովկասից, ապա նաև Հայաստանից հեռացնելու գործում[4]*:*

Ի վերջո, միջազգային-քաղաքական ստիպողական հանգամանքների պարտադրանքով և «արդար հակակրությամբ համակված... Դաշնակցական կառավարության դեմ»[5] *Անդրանիկը հարկադրված հրաժարական է տվել՝ դա բացատրելով հետևյալ կերպ. «Շրջապատված ըլլալով դավաճաններե, կհրաժարիմ Հայաստանի Երկրապահ Զորամասի Հրամանատարութենեն»*[6]*:*

1919 թ. ապրիլին՝ Զատիկի նախօրեին, Զորավար Անդրանիկն իր զորամասով ժամանել է Ս. Էջմիածին, բանակը զորացրել, իսկ ռուսական կառավարության սեփականություն հանդիսացող զենքն ու զինամթերքը տեղավորել տեղի պահեստում՝ փաստացի դրանք հանձնելով Ամենայն հայոց Գևորգ Ե կաթողիկոսին և հայտնել իր արտասահման մեկնելու մասին: Անդրանիկը հանձնել է նաև իր դրոշը, որը ոսկեզօծ ծոպերով էր և կարմիր ֆոնի վրա գրված էր՝ «Առանձին հարվածող զորամաս, զոր. Անդրանիկի»:

Դա տեղի է ունեցել անգլիական հրամանատարության և ամերիկյան Մերձավոր Արևելքի նպաստամատույց կոմիտեի անդամների ներկայությամբ, ինչը ևս վկայում է վերջիններիս ներգրավվածությանը Բաթումի դաշնագրի պարտադրմանը:

Շուտով նաև ՀՀ կառավարության հատուկ հանձնախմբի ներկայությամբ Անդրանիկի զորամասի ձիերը աճուրդի են դրվել՝ փոխարժեքը վճարելով տերերին[7]*:*

Մնացած զինվորներին Անդրանիկն իր ստորագրությամբ վկայականներ է հանձնել և ազատ արձակել՝ ասելով. «Այժմ, ես միայն իմ տերն եմ. դուք ազատ եք.

---

[3] *Նույն տեղում:*

[4] *Ե դ. Ք ա ջ ո ւ ն ի. Հայկական առանձին հարվածող զորամասը. Գեներալ Անդրանիկ, Բոստոն, 1921, էջ 10:*

[5] *Մ. Գ. Ճ ի զ մ ե ճ յ ա ն. Պատմություն ամերիկահայ քաղաքական կուսակցությանց (1890–1925), Ֆրեզնո, 1930, էջ 424:*

[6] *Ա. Ժ ա մ կ ո չ յ ա ն. Զորավար Անդրանիկ կպատասխանե իր հակառակորդներուն, Փարիզ, 1945, էջ 95:*

[7] *Մ. Ա վ ե տ յ ա ն. Հայ ազատագրական ազգային հիսնամյա (1870–1920) հուշամատյան և Զոր. Անդրանիկ (Վերլուծական հայեցողությամբ և վավերական տվյալներով), Փարիզ, 1954, էջ 217, 221:*

ի՛նչ ձև կո՛ւզեք այնպես կշարժիք. հոս Հայաստան է, որովհետև ժողովուրդը Հայ է և հողը մերն է. կարող եք դարձյալ ծառայել հայ ժողովուրդին ինչպես մինչև հիմա ծառայեցիք, իսկ եթե կո՛ւզեք, կա՛նցնիք արտասահման»: Դա վերաբերվում էր մանավանդ արևմտահայերին, որոնք պետք է իրենց հարազատներին փնտրեին Կ. Պոլսում, Կիլիկիայում, Եվրոպայում, ԱՄՆ-ում, և որոնց համար անգլիական իշխանության ներկայացուցիչ գեներալ Գիպպոնը խոստացել էր անձնագրային դյուրություն՝ շնորհիվ Անդրանիկի ստորագրությունը կրող վկայականների[8]*:*

Թեպետ ՀՀ քաղաքական գործիչները պաշտոնների խոստումներով փորձել են Անդրանիկին համոզել մնալ Հայաստանում, սակայն նա անհողդողդ էր «անպետ և անժողովրդավար» կուսակցական ղեկավարների խնդրանքներին, որոնք «ոչինչ կհասկնան դիվանագիտութենե»: Հեռանալուց առաջ Անդրանիկը դատապարտել է ՀՀ կառավարության ներկայացուցիչների խարդախությունները, պահանջել իր վիրավոր ու սպանված զինվորների դիակները, զինվորներից կողոպտված դրամներն ու զենքերը, ինչպես նաև՝ զինվորական ու քաղաքացիական իրավունքի կանոններով հավասարապես և արդար դատաստան տեսնել գորացրված բոլոր այն զինվորականների նկատմամբ, որոնք դավաճանական դրսևորումներ ցուցաբերած լինեին: Բացի այդ, Զորավար Անդրանիկը պահանջել է նաև այն «կարևոր գումարը», որը դեռևս ռազմական գործողությունների ժամանակ արտասահմանի հայությունն ուղարկել էր իրեն և իր բանակի համար, մինչդեռ ՀՀ գործիչներն առգրավել և յուրացրել էին այն: Անդրանիկն այդ մասին հետևյալն է ասել. «Երևանյան կառավարութենեն կպահանջեմ այն կարևոր գումարը որ արտասահմանի հայությունը իմ բանակի համար, իմ անունին ղրկած էր Երևանյան հասցեով, որոնք դրամը ստացան և վար դրին՝ իրենք ուտելու համար, որուն այնքա՛ն պետք ունեի»[9]*:*

Հաջորդ օրն Անդրանիկն իր երբեմնի 300 զինվորականների հետ գեներալ Գիպպոնի ուղեկցությամբ շոգեքարշով մեկնել է Բաթումի նավահանգիստ՝ միաժամանակ Թիֆլիսում և Բաթումում արժանանալով հատկապես անգլիական ներկայացուցիչների լավագույն ընդունելությանը: Փոխադրող նավին մեկ շաբաթ սպասելու ընթացքում անգլիական ծովային հրամանատարությունը դարձյալ գեներալ Գիպպոնի միջնորդությամբ ժամանակավորապես տեղավորել և հյուրասիրել է Զորավար Անդրանիկին ու նրա հետ մեկնող նախկին զինվորներին, ինչպես նաև առաջարկել՝ մինչև մեկնելը դրամ վաստակել ցանկացողներին անգլիական նավերի համար բեռնակրի աշխատանք: «Այսպեսով շատեր գացին աշ-

[8] *Նույն տեղում, էջ 222:*
[9] *Նույն տեղում, էջ 220, 221:*

խատեցան ուրախությամբ. մանավանդ անոնք, որոնք Ամերիկայեն կամավոր եկած էին և անգլիերեն գիտեին»[10]:

Ակնհայտ է, որ Մեծ Բրիտանիայի ծրագրերի մեջ էր մտնում Հայաստանն ու տարածաշրջանը հայ ազատագրական պայքարի երևելի գործիչներից և նրանց հետ կռված զինվորականներից «մաքրելը», «ազատագրելը», առավել ևս, եթե վերջիններս հանդես էին գալիս տարածաշրջանային հայ-ռուսական շահերի պաշտպանության դիրքերից:

1919 թ. մայիսի 15-ին Անդրանիկը, Բաթումում նավ նստելով, բռնել է պանդխտության ուղին՝ անցնելով սկզբում Կ. Պոլիս, հետո՝ Իզմիր, ապա՝ Սալոնիկ, հունիսի 13-ին հասել է Մարսել, երկու օր անց՝ Փարիզ՝ ամենուրեք արժանանալով «պանդուխտ հայության երախտապարտ օվսաննաներուն»: Սակայն Զորավարն անձամբ տխուր էր: «…Ոչ մեկ փառք, մեծարանք զայն չկարողացան մխիթարել. քանի անոր սիրտը այրած էր՝ տաճկահայ ժողովուրդի ոճրային անէացումով, և գանկը պղտոր՝ հայկական դատի անորոշ կացությամբ»,– նշել է վերոհիշյալ իրադարձությունների ականատես, Անդրանիկի զինակից Մանուկ Ավետյանը[11]:

Փարիզում Զորավար Անդրանիկը հանդիպել է Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարին, գրող-հրապարակագիր Արշակ Չոպանյանին, Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Ստեֆան Պիշոնին, նախագահ Ռայմոն Պուանկարեին, որը նրան շնորհել է Ասպետության և Սպայության աստիճաններ, հետագայում նաև՝ «Պատվո լեգեոն» (1920 թ.) շքանշան: Զորավարը Ֆրանսիայում ականատես է եղել նաև ֆրանսիական զորքերի կազմում Հայկական լեգեոնի ստեղծմանը[12]:

Կիլիկիայի ազատագրման հույսով կազմակերպված Հայկական լեգեոնի կարիքների, բայց հիմնականում նաև՝ գաղթականների հայրենիք վերադարձի ծախսերի համար հանգանակություններ կազմակերպելու նպատակով 1919 թ. հունիսին Անդրանիկը մեկնել է Անգլիա, սկզբում՝ Լոնդոն, ապա՝ Մանչեսթր: Մանչեսթրում, որտեղ բարեկամներ ուներ, հուլիսի 13-ին տեղի Հայ կանանց միությունն անձամբ Զորավարին է նվիրել 2.000 անգլիական ոսկի: Այդ առիթով Անդրանիկն ասել է. «Այս գումարը ինձ տվիք. իմս է. շատ շնորհակալ եմ, սակայն ես քանի կ՚ապրիմ գիտեմ որ ոնէ հայու տան մեջ իմ հացը կրնամ ուտել: Սակայն

---

[10] *Նույն տեղում, էջ 222:*

[11] *Ա. Ն. Մնացականյան, Հ. Ղ. Հակոբյան. Զորավար Անդրանիկ, հ. Ա, Մոսկվա, 1991, էջ 256, 257, Մ. Ավետյան. նշվ. աշխ., էջ 223:*

[12] *Ա. Ն. Մնացականյան, Հ. Ղ. Հակոբյան. նշվ. աշխ., էջ 257, Ա. Չելեպյան. նշվ. աշխ., էջ 572, Գ. Գուտուլյան. Զոր. Անդրանիկ և իր կյանքն ու պատերազմները, Բեյրութ, 1929, էջ 37:*

անդին կան հազարավորներ, որոնք ոչ ուտելիք ունին և ոչ ալ հագուստ. ես այս գումարը կտրամադրեմ անոնց, որոնք մերկ են և անոթի»[13]:

Զորավարի առաջնային մտահոգությունը Կովկասում ապաստանած հայ գաղթականներն ու որբերն էին: Ականատեսի բնորոշմամբ, «Ուր որ եղավ նա՝ խոսեցավ, պատկերացնելով Երկրի մեջ մնացած, Կովկաս ապաստանած Հայ Ժողովրդի, Հայ Գյուղացիի, Հայ Ռազմիկի, Որբի դրությունը, անոթի, մերկ, օժանդակության կարոտ. և հրավիրեց, պոռաց Արտասահմանի Հայությանը՝ կատարելու իր նյութական պարտքը՝ օգնելու հայ բեկորներուն»[14]:

Արձագանքելով Զորավարի հորդորներին՝ 1919 թ. սեպտեմբերի 11-ին Մանչեսթրի և Լոնդոնի հայերը ձեռնամուխ են եղել Անդրանիկի նախաձեռնած Հայ փախստականների օժանդակության հագուստեղենի ֆոնդի (Clothing Fund) կազմությանը (պատվավոր նախագահ՝ Զորավար Անդրանիկ, ատենապետ՝ Տիրան Տեովլեթյան, պատասխանատու քարտուղար՝ Գառնիկ Ֆընտրքյան, պատասխանատու գանձապահ՝ Մանուկ Գույումճյան, պատասխանատու գործավար՝ անգլիացի Ջ. Հուայթ): Նպատակն էր հոգալ հայ փախստականների ու որբերի հագուստեղենի և այլ կարիքները[15]: Հանգանակությանը մասնակցել են նաև աշխարհի տարբեր կողմերի հայերը (Հնդկաստան, Սինգապուր, Ռանգուն, Ճավա մինչև Ամերիկաներ)՝ հանգանակվելով 60.700 անգլիական ոսկի: Անգլիական կառավարությունն իր կողմից այդ նպատակին տրամադրել է 51.000, այնպես որ նվիրատվության ընդհանուր գումարը կրկնապատկվել է՝ կազմելով 111.700 անգլիական ոսկի[16]:

Շուտով Մանչեսթրի քաղաքապետությունը ֆոնդի փոխադրական և այլ աշխատանքներին աջակցելու նպատակով դրա վերահսկողությունը հանձնել է Մերձավոր Արևելքի նպաստամատույց կոմիտեի նախագահ գնդապետ Հասկելին, որի միջոցով օգնության առաջին առաքումը (250 տոննա) արդեն 1919 թ. հոկտեմբերի 29-ին Մանչեսթրից նավով ճանապարհ է ելել դեպի Բաթում, ապա Վրաստանի վրայով 1920 թ. փետրվարին հասել Երևան[17]:

Ուղարկված ապրանքները պահվել են Ալեքսանդրապոլում՝ ռուսական զորանոցի հսկա շենքի պահեստում, Անդրանիկի քարտուղար Եղիշե Քաջունու[18] ան-

---

[13] *Ա. Չելեպյան. նշվ. աշխ., էջ 582–583, Մ. Գ. Ճիզմեճյան. նշվ. աշխ., էջ 419, Եղ. Քաջունի. Անդրանիկի և հայկական առանձին հարվածող զորամասի հետ, Նյու Ճըրսի, 1976, էջ 193–194:*

[14] *Ա. Չելեպյան. նշվ. աշխ., էջ 582:*

[15] *Նույն տեղում, էջ 583, Եղ. Քաջունի. Անդրանիկի և հայկական առանձին հարվածող զորամասի հետ, էջ 194:*

[16] *Ա. Թերզիպաշյան. Անդրանիկ, Փարիզ, 1942, էջ 395, Մ. Ավետյան. նշվ. աշխ., էջ 224:*

[17] *Մ. Ավետյան. նշվ. աշխ., էջ 224, Ա. Չելեպյան. նշվ. աշխ., էջ 583:*

[18] *Արաբկիրցի Եղիշե Քաջունին իրավաբանություն էր ուսանել տեղի Ամերիկյան համալսարանում: Առաջին աշխարհամարտի տարիներին ուխտել էր հետևել Անդրանիկին և իր կրթվածության շնորհիվ դարձել նրա անմիջական քարտուղարը՝ վայելելով նրա լիակատար վստահությունը: Եղ. Քաջունուն էր*

միջական պատասխանատվության ներքո, որը նաև համակարգում էր Զորավարի գործերը Կովկասում և Հայաստանում, ինչպես նաև ստանում ու բաժանում փախստականների համար ուղարկված օգնությունը: Ականատեսների վկայությամբ, զորանոցի պահեստում ապրանքը միշտ լիքն էր և միշտ համալրվում էր նորանոր հակերով, որոնց մեջ կար՝ հագուստ, ծածկոց, զինվորական վերարկու, տաբատ, ժակետ, ֆլանել, սպիտակ կտավ, բամբակե կտոր, գուլպա, հականեխական և սովորական օճառ, կաշի, բրդյա թել, կարի թել, սանր, կոշկակարի գործիքներ, կոճակ, թաշկինակ, հագուստի կտոր, դեղորայք, ասպիրին, միջատափոշի և այլն: Ընդհանուր առմամբ, Հայաստան է առաքվել 2.200 հակ ապրանք: Օգնությունը բաժանվել է հայկական զորամասերում ապաստանած գաղթականներին, որբանոցներին, հիվանդանոցներին և այլ հաստատություններին[19]:

Յավոք, «Հայ օջախներուն դուռը և Կովկասի բանալին եղող» Կարսի լքումին հաջորդած Կարաբեքիրի Ալեքսանդրապոլ ներխուժման հետևանքով մեծապես թալանվել է նաև զորանոցի պահեստը, ինչը, սակայն, շուտով կանխվել է Հայաստանի խորհրդայնացումով[20]:

Այդուհանդերձ, մինչև 1922 թ. Հայ փախստականների օժանդակության հագուստեղենի ֆոնդի լուծարումը Եղ. Քաջունին շարունակել է Անդրանիկի նպաստամատույց առաքելությունը՝ այն հասցնելով Կովկասից մինչև Թավրիզ՝ 7.000 «կիսամերկ, անոթի ու սպառած» փախստականներին բաժանելով ֆոնդի տրամադրած 4.000 անգլիական ոսկին և հագուստեղենը[21]:

1919 թ. վերջին Անդրանիկը Մանչեսթրից անցել է Լոնդոն, ապա նոյեմբերի սկզբին՝ Փարիզ, որտեղ մեծ ընդունելության արժանանալուց հետո, որպես Ազգային պատվիրակության ներկայացուցիչ, հրավիրվել է հավասար իրավունքներով մաս կազմելու ԱՄՆ ուղևորվող ազգային և ՀՀ ներկայացուցիչներից բաղկացած Զինվորական առաքելության (միսիա)[22]: Եվ քանի որ ֆրանսիական կառավարությունն արդեն մերժել էր Փարիզի Ազգային պատվիրակության դիմումն աջակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը, պատճառաբանե-

---

վստահված պաշտոնական գրագրություն վարելը, զորաբանակի ելումուտը, հաշվապահությունը, եվրոպական լեզուների թարգմանչի պաշտոնը և այլն: 1916 թ. անցել է Վան և ռուս նահանգապետ գնդապետ Տերմենի օրոք եղել Վանում դատարանի անդամ: Բաթումի դաշնագրի կնքումից հետո դարձել է Զորավար Անդրանիկի հրամանատարության տակ գործող Հայկական առանձին հարվածող զորամասի գանձապահ: 1922 թ. հուլիսին Անդրանիկի հետ մեկնել է ԱՄՆ: 1927–1928 թթ. եղել է Նյու Յորքի Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) կենտրոնական վարչության ատենապետ (տե՛ս Մ. Ավետյան. նշվ. աշխ., էջ 265–266, Եղ. Քաջունի. Անդրանիկի և հայկական առանձին հարվածող զորամասի հետ, էջ 205, 207):

[19] *Մ. Ավետյան. նշվ. աշխ., էջ 225, 266, Եղ. Քաջունի. Անդրանիկի և հայկական առանձին հարվածող զորամասի հետ, էջ 195:*

[20] *Ա. Թերզիպաշյան. նշվ. աշխ., էջ 354, Մ. Ավետյան. նշվ. աշխ., էջ 225, 266:*

[21] *Ա. Չելեպյան. նշվ. աշխ., էջ 585, Մ. Ավետյան. նշվ. աշխ., էջ 195:*

[22] *Եղ. Քաջունի. Անդրանիկի և հայկական առանձին հարվածող զորամասի հետ, էջ 195:*

լով, որ Հայաստանը դեռևս պաշտոնապես ճանաչված պետություն չէ, ուստի պատվիրակությունը որոշել էր Զինվորական առաքելություն ուղարկել ԱՄՆ՝ վերջինիս պաշտոնական շրջաններից խնդրելով ռազմական, ռազմամթերային ու զինական աջակցություն Հայաստանի Հանրապետությանը, սահմանների պաշտպանության հարցում[23]: Այդ նպատակով նոյեմբերի 22-ին Զորավար Անդրանիկի և զորավար Հակոբ Բագրատունու մասնակցությամբ զինվորական հանձնախմբեր են մեկնել ԱՄՆ: Առաջինին ընկերակցում էր հրամանատար Հայկ Բոնապարտյանը, իսկ երկրորդին՝ փոխհրամանատար Միքայել Տեր-Պողոսյանը[24]: Պատվիրակությունը ֆրանսիական "Savoir" շոգենավով հասել է Նյու Յորք, ապա խանդավառ ընդունելության արժանացել երկրի հայաշատ բոլոր քաղաքներում՝ «փոխադարձաբար Հայաստանի ապագային մասին հույս ու քաջալերություն» ներշնչելով ամերիկահայերին[25]:

Զորավար Անդրանիկի ներկայությունն առանձնակի կշիռ է հաղորդել Զինվորական առաքելությանը: Ականատեսների գնահատմամբ, ԱՄՆ-ում «տեղվույն հայրենաբաղձ Հայությունը՝ Ատլանտյանեն մինչև Խաղաղականը անոր ցույց տվավ այնպիսի խանդավառ ընդունելություն մը, որ Ամերիկացիները սկսան զարմանքով իրարու հարցնել, թե ո՞վ էր իրենց երկիրը եկող այդ հյուրը: Ու երբ անոնք իմացան, թե այդ հյուրը Հայերու համար եղած է այն, ինչ որ Վաշինկթոն եղած է Ամերիկացիներու համար, ...զայն Ֆիլատելֆիո մեջ տարին բազմեցնելու Վաշինկթոնի պատմական աթոռին վրա, բացառիկ պատիվ մը, որ Ամերիկայի մեջ վերապահված է պատմության մեջ էջ մը գրավող անձնավորությանց»[26]:

1919 թ. հոկտեմբերի 9-ին ԱՄՆ՝ Նյու Յորք էր մեկնել նաև ՀՀ ներկայացուցիչներից բաղկացած Քաղաքական առաքելություն, որի նպատակն էր երկրի ղեկավարությունից քաղաքական ու տնտեսական աջակցություն խնդրել: Քաղաքական առաքելության կազմում էին՝ Հովհաննես Քաջազնունին (առաջին վարչապետ), դոկտոր Գարեգին Փաստրմաճյանը (Արմեն Գարո՝ Հայաստանի խորհրդարանի անդամ, ԱՄՆ-ում ՀՀ ներկայացուցիչ), երկու սահմանադիր-ռամկավարներ Արտաշես Էնֆիաճյանը (ֆինանսների նախկին նախարար) և Արտեմ Փիրալյանը (գյուղատնտես), պրոֆեսոր Աբրահամ Տեր-Հակոբյանը (Ազգային պատվիրակության փոխնախագահ և լիազոր ներկայացուցիչ, որը գործում էր ԱՄՆ-ի կառավարությանը կից), ինչպես նաև՝ Սուրեն Մելիքյանը (Հովհ. Քաջազնունու քարտուղար)[27]: ԱՄՆ-ի կառավարությունը պատշաճ ընդունելության է

---

[23] *Թ ե ո դ ի կ. Ամենուն տարեցույցը, ԺԶ տարի, Կ. Պոլիս, 1922, էջ 292:*

[24] *Նույն տեղում, էջ 291, Մ. Ճ ի զ մ ե ճ յ ա ն. նշվ. աշխ., էջ 416–417, Ա. Չ ե լ ե պ յ ա ն. նշվ. աշխ., էջ 590:*

[25] *Եղ. Քաջունի. Անդրանիկի և հայկական առանձին հարվածող զորամասի հետ, էջ 195:*

[26] *Ա. Թ ե ր զ ի պ ա շ յ ա ն. նշվ. աշխ., էջ 397:*

[27] *Գ. Տ ո ն ա պ ե տ յ ա ն. Հ. Յ. Դաշնակցությունը Հյուսիսային Ամերիկայի մեջ, Բ հատոր (1910–1923), Բոստոն, 1995, էջ 490, 492, Ա. Չ ե լ ե պ յ ա ն. նշվ. աշխ., էջ 590, Թ ե ո դ ի կ. նշվ. աշխ., էջ 291–292:*

արժանացրել իր «փոքր դաշնակցի» ազգային ընտրանու ներկայացուցիչներին, իսկ ամերիկահայերն՝ ի պատիվ իրենց բարձրաստիճան հայրենակիցների, ամենուրեք խանդավառ ցույցերով են դիմավորել նրանց[28]: «Հայրենիք» օրաթերթը հետևյալ կերպ է նկարագրել այդ պատմական իրադարձությունը. «[Նյու Յորքի] նավամատույցը հավաքված էր բազմահազար բազմություն մը, հարյուրավոր հայկական դրոշակով զարդարված օթոմոպիլներով և կառքերով: Հյուրերը ցամաք ելան օդը թնդացնող ծափերու և կեցցեներու մեջ և հսկայական թափորով մը առաջնորդվեցան Ուոլտորֆ Ասթորիա հոթելը, որուն ճակատը կծածաներ հայկական խոշոր դրոշակ մը:

Հայկական բոլոր ակումբները, մեծ վաճառատունները վայելչորեն դրոշակազարդված էին հայկական եռագույնով: Երկար ատեն Ֆիֆթ Էվընյուի առնտուրը կանգ առավ ճամբա տալու համար հայկական թափորին:

Այսօր Նյու Յորքի հայ գաղութի համար տոնական մեծ օր մըն է»[29]:

Զորավար Անդրանիկի ցանկությունն էր, որպեսզի Հակոբ Բագրատունին և Հայկ Բոնապարտյանը, որպես արևելահայ և արևմտահայ հատվածները ներկայացնող երկու զորավարներ, «խորհրդակցությամբ ու համերաշխորեն վարեն այս հույժ կարևոր ու կենսական գործը, և Ամերիկյան կառավարության տրված խնդրագրին ներքև երկու զորավարները միատեղ ստորագրեն»: Դա, ցավոք, տեղի չի ունեցել, քանի որ Հ. Բագրատունին, առանց խմբի անդամների հետ համաձայնեցնելու, առաջինը և առանձին է ներկայացել ԱՄՆ պատերազմական նախարարին՝ հանձնելով Զինվորական առաքելության խնդրագիրը[30]:

Շուտով, Անդրանիկն ու Հ. Բոնապարտյանը ևս Վաշինգտոնում հանդիպել են երկրի պատերազմական նախարար Նյութոն Բեյքրրի հետ՝ տեղեկացնելով Հայաստանի վիճակի, զինվորական ու ռազմական կացության, որբերի, այրիների, գաղթականների մասին: Բայց և այնպես, նրանք հորդորել են ընթացք տալ զորավար Հ. Բագրատունու խնդրագրին, ինչը ենթադրում էր ԱՄՆ-ի ռազմական օգնություն Հայաստանի Հանրապետությանը արտաքին թշնամիներից պաշտպանվելու և երկրի անվտանգությունն ապահովելու նպատակով, իսկ հետագայում նաև՝ զինվորական մասնագետներ պատրաստելու առումով: Նախարարը հավաստիացրել է՝ ասելով, թե «Մեր լավագույնը պիտի ընենք Հայ ազգին համար»[31]: Հայ պատվիրակներն այցելել են նաև Սպիտակ տուն, որտեղ հանդիպել են նախագահ Վ. Վիլսոնի անձնական քարտուղար Ջոզեֆ Թյումալթիի հետ, որը նրանց

---

[28] *Մ. Գ. Ճիզմեճյան. նշվ. աշխ., էջ 416–417:*

[29] *Գ. Տոնապետյան. նշվ. աշխ., էջ 490, 492:*

[30] *Մ. Գ. Ճիզմեճյան. նշվ. աշխ., էջ 417, 418:*

[31] *Եղ. Քաջունի. Անդրանիկի և հայկական առանձին հարվածող զորամասի հետ, էջ 196, Մ. Գ. Ճիզմեճյան. նշվ. աշխ., էջ 418–419:*

է փոխանցել հայկական խնդրի վերաբերյալ վատառողջ նախագահի մտահոգությունն ու կարեկցանքը[32]:

Բայց և այնպես, Անդրանիկն այդ հանդիպումների հետ շատ հույսեր չէր փայփայում, քանի որ նկատել էր, որ ԱՄՆ-ում, առանձնապես առաջիկա նախագահական ընտրությունների հետ կապված, երկրի արտաքին քաղաքականությունը «քիչ մը շատ վարանքոտ ու անորոշ էր»[33]:

ԱՄՆ-ում ևս Զորավարի հոգին հայրենիքում էր՝ «Հայ ժողովուրդին ու մասնավորաբար զրկվածներուն ու կարոտյալներուն հետ»[34], և նա չի դադարել իր հայրենակիցների սատարմանն ուղղված հանգանակիչ ձեռնարկները: Այդ մասին Մ. Ճիզմեճյանը գրել է. «Ամերիկահայության ցույց տված անօրինակ խանդավառությունը, որուն աղբյուրը անոր Հայրենիքի հանդեպ սնուցած սերն ու հետաքրքրությունն էր, միացած առատության հետ զոր, այդ օրերուն ան կվայելեր, Անդրանիկի մեջ նորեն արթնցուցին Հայաստան թողած իր և իր հյուրընկալներու արյունակիցներուն թշվառության հիշողությունը, նորեն անոր մեջ արթնցուցին իր բան մը ընելու պարտավորության զգացումը, ու ան՝ նախաձեռնու եղավ և գլուխը կանգնեցավ մեծ հանգանակության մը»[35]:

Անձամբ Պողոս Նուբարի հատուկ հանձնարարությամբ իր վրա դրված Զինվորական առաքելությունն ավարտելով՝ Զորավար Անդրանիկը ԱՄՆ-ում Փարիզի Ազգային պատվիրակության լիազոր ներկայացուցիչ՝ Հայ ազգային միության (հիմնադիր նախագահ՝ Միհրան Սվազլյան) հետ 1920–1921 թթ. ձեռնամուխ է եղել նաև հայ կարոտյալներին ու նորաստեղծ հայկական խորհրդային հանրապետությանը սատարելու կոչված «Փրկության հանգանակության»: Զորավարը հայ ազգային ու քաղաքական բոլոր կառույցներին և կուսակցություններին հրավիրել է մասնակցելու համազգային այդ հանգանակությանը: Այդուհանդերձ, հանգանակության կազմակերպման առթիվ դեռևս 1919 թ. դեկտեմբերի 16-ին հրավիրված խորհրդակցությանը մասնակցել են միայն Հայ Առաքելական և Ավետարանական եկեղեցիների վարչությունները, Վերակազմյալ հնչակյան և Սահմանադիր-ռամկավար կուսակցությունների կենտրոնական մարմինները, ՀԲԸՄ շրջանային հանձնաժողովը, իսկ Հայ հեղափոխական դաշնակցությունն ու Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցությունները չեն մասնակցել[36]: Ա. Չելեպյանի բնորոշմամբ՝ «Սկզբնական գործակցությունը Ռամկավար-Հնչակյան-Դաշնակցական հատվածներուն միջև, շուտով տեղի պիտի տար պրկումներու և ան-

---

[32] *Ա. Չելեպյան. նշվ. աշխ., էջ 591:*

[33] *Եղ. Քաջունի. Անդրանիկի և հայկական առանձին հարվածող զորամասի հետ, էջ 196:*

[34] *Նույն տեղում, էջ 195:*

[35] *Ա. Թերզիպաշյան. նշվ. աշխ., էջ 397:*

[36] *Մ. Գ. Ճիզմեճյան. նշվ. աշխ., էջ 419, 420, Թեոդիկ. նշվ. աշխ., էջ 292:*

համաձայնություններու, հանգանակված գումարներու բաշխումի ձևին առնչությամբ»[37]*, ինչպես նաև՝ այլևայլ պատճառաբանություններով:*

ԱՄՆ-ի Արևելյան, Միջին և Կալիֆոռնիայի նահանգներում հանգանակիչ այդ առաքելությունը համապատասխանաբար համակարգել են Ամերիկայի հայ ազգային միության կողմից նշանակված գործիչներ Կարապետ Փափազյանը, Վահե Հայկը և Գերաշնորհ Շահե Վրդ. Գասպարյանը: Սույն միջոցառումը շարունակությունն էր 1919 թ. աշնանը Անգլիայում՝ Մանչեսթրում և Լոնդոնում, Անդրանիկի անցկացրած Հայ փախստականների հագուստեղենի ֆոնդի հանգանակության[38]*:*

Զորավար Անդրանիկի նախագահությամբ ընտրվել է «Փրկության հանգանակության» Կենտրոնական հանձնախումբ, որի կազմում էին՝ Գերաշնորհ Շահե Վրդ. Գասպարյանը (ատենապետ), Պատրիկ Կյուլպենկյանը (փոխատենապետ), Երվանդ Մեսիայանը (ատենադպիր), Մաղաք Պերպերյանը (փոխատենադպիր), Միհրան Գարակյոզյանը (գանձապահ), Մ. Գոնտազյանը (փոխգանձապահ), Վեր. Գ. Պետրոսյանը (ընդհանուր քարտուղար): Անդամներն էին՝ Ալեքսանդր Գևորգյանը, Աշոտ Թիրեաքյանը, Ավետիս Մելյանը, Վեր. Անդրանիկ Պետիկյանը, Լեմվել Կոստիկյանը, Կարապետ Փուշմանյանը, Հրանտ Թելֆեյանը, Հակոբ Դերձակյանը, դոկտոր Հովհաննես Ծովիկյանը, Վեր. Հ. Տեփոյանը, Վ. Տյուլսիզյանը, Տիգրան Տոնճյանը[39]*:*

Հանգանակության ընդհանուր հաշիվները, բյուջեն ու դրամի առաքումը հսկելու նպատակով կազմվել է Ֆինանսական կոմիտե (Finance Committee) *(անդամներ՝ Հ. Թելֆեյան, Ա. Թիրեաքյան, Լ. Կոստիկյան), իսկ հանգանակության քարոզչությունն իրականացնելու նպատակով՝ Հանրականության կոմիտե* (Publicity Committee) *(անդամներ՝ դոկտոր Հովհ. Ծովիկյան, Հ. Դերձակյան, Պողոս Նորհատ)*[40]*:*

«Փրկության հանգանակության» կազմակերպման առիթով Զորավար Անդրանիկը դիմել է ԱՄՆ-ի հայությանը՝ կոչ անելով առատաձեռն մասնակցություն ունենալ ի նպաստ Հայաստանում և արտերկրում վերապրած հայրենակիցների փրկության: Կոչում մասնավորապես ասվում էր.

«Սիրելի հայրենակիցներ,

Ամերիկահայ գաղութը, ազգային ամեն տեսակ դեպքերու հանդեպ իր հայրենասիրության և առատաձեռնության ապացույցները տված է քանիցս: Վստահ եմ, որ այս անգամ ևս անիկա արժանի պիտի գտնվի իր համբավին և ինքնիրեն

---

[37] *Ա. Չելեպյան. նշվ. աշխ., էջ 591:*
[38] *Մ. Գ. Ճիզմեճյան. նշվ. աշխ., էջ 419:*
[39] *Նույն տեղում, էջ 421–422, Թեոդիկ. նշվ. աշխ., էջ 292:*
[40] *Մ. Գ. Ճիզմեճյան. նշվ. աշխ., էջ 421–422:*

գերագույն չափով ցույց պիտի տա իր զոհաբերության ոգին՝ ներկա ճգնաժամային վայրկյաններու մեջ, լիարյուն մասնակցելով հանգանակության:

Հետևաբար ես կոչ կընեմ Ամերիկայի բովանդակ հայության:

Հանուն անոնց, որ հայ ազատագրության պայքարին առաջին օրերեն սկսյալ մինչև այսօր, մանավանդ վերջին չորս տարվան պատերազմի միջոցին, զեն ի ձեռին մարտնչեցան Ազատ Հայաստանի համար, և շատերը իրենց պատվական արյունով ոռոգեցին անոր Սուրբ Հողը:

Հանուն անոնց, որ չարչարվեցան ու նահատակ ինկան հալածանքի և տարագրության ճամբաներու, աքսորավայրերու, բանտերու մեջ և կախաղաններու վրա:

Եվ հանուն անոնց, որ դեռ կտառապին աննկարագրելի, անպատմելի աղետներու և թշվառության ճիրաններուն մեջ կգտնվին Վաղվան Հայաստանի զինվորները, մտքի և տնտեսության մշակները, մեր ցեղին բովանդակ հանճարը և մեր ամբողջ հույսը:

Որպեսզի օգնության ազատարար ձեռքը կարկառենք իրենց, այսօր, այս ժամուն իսկ, որովհետև արդեն ՈՒՇ է, և վաղը, գիտցեք՝ ՇԱՏ ՈՒՇ ՊԻՏԻ ԸԼԼԱ:

Կոչ կընեմ ամեն կարգի ազգային հաստատությանց ու կազմակերպություններու, նաև Որբախնամ ու Կարմիր Խաչ և Համաքաղաքացիական Միություններու և Ընկերություններու և անխտիր ամեն տեսակի ու դասակարգի, որպեսզի յուրաքանչյուրն իր կարողության լրիվ չափով մասնակցի հանգանակությանց և աջակցությունն ընծայե զայն կատարյալ հաջողություն մը ընելու համար, վստահ ըլլալով, որ հանգանակությունեն գոյացած գումարներն ապահովագույն միջոցներով և խղճմտությամբ պիտի հատկացվին գեթ մասամբ ամոքելու Ազգին ծովացյալ տառապանքը:

Հայրենակիցներ,

Եթե հավատք ու իղձ ունիք Հայ Ազգին ապագային և Ազատ Հայաստանի համար,

Եթե կհարգեք Ազատության համար ինկած Նահատակներու հիշատակը,

Եթե չեք ուզեր պատասխանատու մնալ ձեր խղճին ու պատմության առջև,

Տվեք, առատորեն տվեք, և մի զրկեք զձեզ Ազգին վերջին բեկորներուն, մեր նահատակներու թանկագին ավանդներուն օգնելու պատիվեն: ԱՆԴՐԱՆԻԿ»[41]:

Զորավար Անդրանիկն ու հրամանատար Հ. Բոնապարտյանը, շրջելով ողջ ԱՄՆ-ի երկայնքով՝ Ատլանտյանից մինչև Խաղաղ օվկիանոսի ափերը, իրենց ոգեշնչող ելույթներով կոչ են արել Հայաստանի համար ճակատագրական այդ պահին միահամուռ սատարել հայրենի ժողովրդի ու նորաստեղծ պետության տարաբնույթ կարիքներին: Ժամանակակցի գնահատմամբ, ամերիկահայությունը՝ «հարուստ թե աղքատ, վաճառական թե գործավոր՝ հպարտությամբ ու խան-

[41] *Ա. Ն. Մնացականյան, Հ. Ղ. Հակոբյան. նշվ. աշխ., էջ 259–261:*

դավառությամբ կո՛ղջունեն իրենց հերոսները և որպես նվիրական պարտականություն՝ առատաձեռն մասնակցությամբ կբերեն իրենց նյութական բաժինը Փրկության Հանգանակության»[42]:

Սկզբնապես Զորավար Անդրանիկի և Ազգային պատվիրակության ներկայացուցիչ պրոֆ. Ա. Տեր-Հակոբյանի, ՀՀ ներկայացուցիչ Հ. Քաջազնունու, ԱՄՆ-ում ՀՀ ներկայացուցիչ դոկտոր Գ. Փաստրմաճյանի միջև ԱՄՆ-ում կայացած համաձայնությամբ որոշվել էր «Փրկության հանգանակության» արդյունքը տնօրինել հետևյալ կերպ. Կովկասի որբերի ու կարոտյալների համար ՀՀ կառավարությանը հատկացնել հանգանակված ընդհանուր գումարի 40 %-ը, Կ. Պոլսի Ազգային Պատրիարքության խնամատարական նպատակներին՝ 30 %-ը, Կիլիկիայի շրջանի կարոտյալներին՝ 20 %-ը, Եգիպտոսում գործող ՀԲԸՄ տնօրինմանը՝ 10 %-ը, ինչպես նաև՝ որոշակի գումար էլ հատկացվելու էր Թավրիզի Ներսես Մելիք-Թանգյան սրբազանի տնօրինմանը՝ ի նպաստ կարիքավորներին[43]:

Համազգային հերոս Անդրանիկի ջանքերը շուտով հաջողությամբ են պսակվել: Արդեն 1921 թ. օգոստոսին ամերիկահայության ու հիմնականում ՀԲԸՄ-ի շնորհիվ ընդհանուր առմամբ հանգանակվել է ավելի քան 532.000 դոլար, որն առաքվել է հետևյալ նպատակներով. Հայաստանի Հանրապետություն՝ 175.440, Կիլիկիա՝ 109.170, Կ. Պոլսի Ազգային Պատրիարքություն՝ 130.600, ՀԲԸՄ՝ 45.000, պարսկահայ կրթական գործեր՝ 21.000, Ազգային պատվիրակություն՝ 20.000, հանգանակության ծախսեր՝ 21.424, Հաղթանակի արժեթղթեր՝ 4.109, պատրաստի գումար՝ 5.290[44]: Փաստորեն, ընդհուր առմամբ Սահմանադիր-ռամկավար կուսակցության և ՀԲԸՄ մասնաճյուղերի աջակցությամբ հավաքված գումարի զգալի մասը, այդուհանդերձ, հատկացվելու էր Հայաստանի Հանրապետությանը, և ինչպես Ավ. Թերզիպաշյանն է գնահատել, թեթևացնելու Անդրանիկի իսկ «քեն ըրած (ՀՀ – Ք. Ա.) կառավարության ուսերուն վրա ծանրացող բեռը»[45]:

Ազգային պատվիրակության կազմակերպած «Փրկության հանգանակությանն» իրենց մասնակցությունը չբերած ՀՅԴ գործիչներն ԱՄՆ-ում գտնվող ՀՀ առաջին վարչապետ Հովհաննես Քաջազնունու ղեկավարությամբ այդ նույն ժամանակաշրջանում կազմակերպել են ի նպաստ Բանակի հանգանակություն, որին ամերիկահայերը նույնպես իրենց անմնացորդ մասնակցությունն են բերել՝ ընդհանուր առմամբ հավաքելով ավելի քան 561.201 դոլար[46]: Հանգանակված

---

[42] *Մ. Գ. Ճիզմեճյան. նշվ. աշխ., էջ 422:*

[43] *Նույն տեղում, էջ 420, Եղ. Քաջունի. Անդրանիկի և հայկական առանձին հարվածող զորամասի հետ, էջ 196:*

[44] *Ա. Ն. Մնացականյան, Հ. Ղ. Հակոբյան. նշվ. աշխ., էջ 261, Եղ. Քաջունի. Անդրանիկի և հայկական առանձին հարվածող զորամասի հետ, էջ 196, Մ. Գ. Ճիզմեճյան. նշվ. աշխ., էջ 422:*

[45] *Ա. Թերզիպաշյան. նշվ. աշխ., էջ 397:*

[46] *Մ. Գ. Ճիզմեճյան. նշվ. աշխ., էջ 423:*

դրամը լիիրավ տնօրինելու միտումով ՀՅԴ-ն ամեն կերպ չեզոքացրել է Բանակի հանգանակությանը Վերակազմյալ հնչակյանների միանալու փորձերը[47]:

Ամերիկահայերի շրջանում Անդրանիկի, Ամերիկայի հայ ազգային միության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչների ծավալած հայաստանանպաստ գործունեության ազդեցությունն այնքան մեծ էր, որ 1920 թ. ԱՄՆ-ի բանակում ծառայած 600 հայ զինվորականների թափորը երկրի տարբեր քաղաքներից հավաքվել է մայրաքաղաք Վաշինգտոնում և համաշխարհային ճանաչում ունեցող դիմածնոտային պլաստիկ վիրաբույժ Վարազդատ Գազանճյանի գլխավորությամբ, հայազգի սպաների առաջնորդությամբ և նվագախմբի ուղեկցությամբ ճոխ զորահանդես իրականացրել: Անցնելով Վաշինգտոնի գլխավոր փողոցներով՝ Սպիտակ տան, Արտաքին գործերի նախարարության, Կոնգրեսի (Ծերակույտ), Սենատի (Երեսփոխանական ժողով) առջևից՝ երթի մասնակիցները Հիշատակագիր են հանձնել երկրի բարձրաստիճան պաշտոնյաներին խնդրելով «ներկա Հայաստանի Հանրապետության ճանաչումն ու՝ պատմական Հայաստանը»: Նրանց դիմավորել են կոնգրեսական Հենրի Քեբրթ Լոջը, արտգործնախարար Բեյնբրիջ Քոլբին, սենատոր Ռոջերսը, որոնք հայասիրական ելույթներ են ճառել: Արդյունքում, ցույցից 12 օր անց ԱՄՆ-ը պաշտոնապես ճանաչել է Հայաստանի Հանրապետությունը՝ «իբրև քույր Հանրապետություն»: Այդ ճանաչման մասին պաշտոնապես հայտարարել է Գ. Փաստրմաճյանը՝ դառնալով ԱՄՆ-ում ՀՀ դեսպանը մինչև 1920 թ. աշուն[48]:

1920 թ. ԱՄՆ-ից Անգլիա՝ Մանչեսթր, մեկնելուց առաջ Անդրանիկն իր երախտիքի խոսքն է հղել ամերիկահայությանը, որը, հակառակ ամեն տեսակի խոչընդոտների, գործուն և առատաձեռն մասնակցություն էր ցուցաբերել «Փրկության հանգանակությանը»: Նա նշել է. «Իմ խորին շնորհակալություններս կհայտնեմ Ամերիկահայ Գաղութի բոլոր այն ազգայիններուն և կազմակերպությանց, որոնք բարի եղան Փրկության Հանգանակության հաջողության համար բերելու իրենց նյութական և բարոյական օժանդակությունը և գործակցությունը:

Ես կհավատամ, թե շնորհակալ են որբերը և այրիները, որոնց արցունքները սրբեցիք մասամբ, և գոհ է Հայրենիքը մանավանդ որ իր հեռավոր զավակները անտարբեր չեն իր ցավերուն և կարոտությանց հանդեպ:

Ուստի գոհ սրտով և հանգիստ խղճով կմեկնիմ: Անդրանիկ»[49]:

1920 թ. նոյեմբերին դրամահավաքության նպատակով Անդրանիկը երկու ամսով մեկնել է նաև Եգիպտոս՝ Ալեքսանդրիա, ապա Կահիրե՝ արժանանալով ե-

---

[47] *Թ ե ո դ ի կ. նշվ. աշխ., էջ 293:*

[48] *Նույն տեղում:*

[49] *Պատվո Գիրք Փրկության Հանգանակության Հայոց Ամերիկայի. 1920–1921. Անվանացանկ նվիրատուներու և ընդհանուր հաշվետվություն, Հրատարակություն Փրկության Հանգանակության կեդրոնական հանգանակիչ հանձնաժողովին, Բոստոն, 1921, էջ 2:*

գիպտահայերի ջերմ ընդունելությանը: Նրա շքախմբում էին՝ հրամանատարներ Հայկ Բոնապարտյանը և Ջիմ Չանգալյանը: Ալեքսանդրիայում է, որ եգիպտահայերը «Հայ ակումբ» հանդիսասրահում, Զորավարի խնդրանքով նեղ շրջանակում՝ 150 համայնքայինների ներկայությամբ, ազգային հերոս Անդրանիկին նվիրել են ոսկեպաճույճ և ադամանդակուռ պատյանով սուր: Ոսկերչական արվեստի բացառիկ ստեղծագործություն հանդիսացող այդ սրի վրա հիշատակված էին Անդրանիկի գլխավորած նշանավոր ճակատամարտերը:

Ապա Անդրանիկը մեկնել է Պորտ-Սայիդ, ծանոթացել հայկական վրանաքաղաքի և հայ լեգեոնականների կյանքին[50]:

1921 թ. գարնանը Փարիզում, կնքահայրությամբ ՀԲԸՄ հիմնադիր նախագահ և Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարի, Անդրանիկն ամուսնացել է քրոջ՝ Նազելիի ընկերուհու, բուլղարահայ Նվարդ Քյուրքչյանի հետ և որոշ ժամանակ անց նորից մեկնել ԱՄՆ[51]:

Այդ ընթացքում՝ մինչև ԱՄՆ-ը մեկնելը, Լոնդոնում և Փարիզում գտնվող մի խումբ հույն մեծահարուստներ Անդրանիկին առաջարկել են կամավորական բանակով օգնության հասնել Իզմիրում դժվարության մեջ հայտնված հույն զինվորներին, սակայն ավելի ուշ՝ 1922 թ. հոկտեմբերին, երբ վերջիններս թուրքերի կողմից պարտության էին մատնվել, այդ ծրագիրը ի չիք է դարձել[52]: Անդրանիկը խոր ցավով է ընդունել նաև հայերի նկատմամբ արդեն քեմալական թուրքերի կողմից իրագործված վայրագությունները՝ Իզմիրի աղետը (1922 թ.)[53]:

1922 թ. հուլիսի 5-ին Անդրանիկը տիկնոջ հետ Սաութեմփթըն Ուայթ Սթար ընկերության «Օլիմպիկ» շոգենավով Լոնդոնից ճամփա է ընկել դեպի ԱՄՆ և հուլիսի 12-ին հասել Նյու Յորք՝ իջևանելով Սևիլ պանդոկում: Եղ. Քաջունու գնահատմամբ, այդտեղ «խուժեցին զինքը սիրող ու հարգող ամերիկահայերը, ու, հակառակ իր ընդդիմության, շատեր համբուրեցին այն աջը՝ որ երկար տարիներ սուր էր բռնած հանուն ցեղի պաշտպանության ու ինչու չէ, նաև ազատության»[54]:

Անդրանիկը բնակության վայր էր ընտրել Կալիֆոռնիան՝ հավանելով թե՛ կլիման, թե՛ հայաշատ բնակչությունը և թե՛ Ռիչարդսոնի հանքային ջրերը[55], որոնք նպաստավոր էին նրա առողջության համար: Ինչպես Զորավարի կենսագիրներն են նշում, «Ամուսնութենեն առաջ թե վերջ, Անդրանիկ մտածած է իր կազմելիք

---

[50] *Ա. Չելեպյան. նշվ. աշխ., էջ 641, Ա. Ն. Մնացականյան, Հ. Ղ. Հակոբյան. նշվ. աշխ., էջ 257, 258:*

[51] *Ա. Չելեպյան. նշվ. աշխ., էջ 646, Գ. Ղարիբջանյան. Ժողովրդական հերոս Անդրանիկ, Երևան, 1990, էջ 171:*

[52] *Եղ. Քաջունի. Անդրանիկի և հայկական առանձին հարվածող զորամասի հետ, էջ 200:*

[53] *Գ. Ղարիբջանյան. նշվ. աշխ., էջ 171:*

[54] *Ա. Չելեպյան. նշվ. աշխ., էջ 648, Եղ. Քաջունի. Անդրանիկի և հայկական առանձին հարվածող զորամասի հետ, էջ 200:*

[55] *Ա. Թերզիպաշյան. նշվ. աշխ., էջ 399, 404–405, Մ. Գ. Ճիզմեճյան. նշվ. աշխ., էջ 424:*

բույնին միջավայրին մասին. միջավայր՝ որ իր բնությամբ և հայկական նկարագիրովը, քիչ թե շատ հիշեցնե հայրենիքը և իրեն մոռցնել տար իր հայրենաբաղձության վիշտը. և, որպես այդպիսին, ան ընտրած է Քալիֆորնիա»[56]:

Անդրանիկը մի որոշ ժամանակ մնացել է Սան Ֆրանցիսկոյում, հետո՝ օգոստոսի սկզբին, Սակրամենտոյի հյուսիսային կողմում գտնվող Չիքոյի ջերմուկների հյուրանոցում, ապա փոխադրվել Ֆրեզնո, որտեղ եղանակը չորային էր և նպաստավոր նրա ծանրացած առողջության համար: Սկզբում նա կառավարությունից ԱՄՆ-ում բնակվելու 6 ամսվա թույլատրություն ուներ, ապա այն երկարացրել է ևս 6 ամսով, իսկ մեկ տարին լրանալուց հետո օրինական ձևակերպում տվել ԱՄՆ-ում իր մշտական կեցությանը[57]:

Ֆրեզնոյում Անդրանիկի բնակարանը քանիցս հրո ճարակ է դարձել՝ իր հետ տանելով փաստաթղթեր, արժեքավոր իրեր: Շուտով Կալիֆոռնիայի առատաձեռն հայությունը նրան է նվիրել մի բնակարան, որի ստորին հարկում նաև խանութ կար, որպեսզի «ազգային հերոսը նյութական մտահոգություն չունենա»[58]:

Այդուհանդերձ, Զորավարի միտքն ու հոգին հայրենի երկրի ու ժողովրդի հետ էր: Ավ. Թերզիբաշյանը, նկարագրելով օտարության մեջ ազգային հերոսի հոգեվիճակը, գրել է. «Հանգանակության զբաղումեն անգամ մը զերծ՝ Անդրանիկ նորեն ինքզինքը մատնված կզգա անգործության, մինակության ձանձրույթին, որուն վրա ավելնալու եկած հայրենաբաղձությունը՝ իր մեջ կ՚արծարծե այս անգամ ցավը՝ որ ինքը՝ այսպես թե այնպես, զրկված է վայելելե Հայրենիքին մեջ տիրող ազատությունը, որուն վրա՝ որպես անոր ռահվիրա, ամենեն ավելի շատ իրավունք ուներ»[59]:

Հեռավոր ԱՄՆ-ում Անդրանիկ Զորավարի հոգեմտավոր ապրումները Ա. Չելեպյանը հետևյալ կերպ է նկարագրել. «Խաղաղական օվկիանոսի ափերուն խաղաղ ու անդորր կյանքը հերոսին կյանքը չէր. ան վարժված չէր անգործ ու խաղաղ կյանքի. Քալիֆորնիան աքսորավայրն էր Անդրանիկի…:

Թիֆլիսի հայ փոլիթիկոսներուն գործած քաղաքական աններելի սխալներեն և Էրզրումի անփառունակ նահանջեն ետք, աշխարհի վրա ոչ մեկ խաղաղ անկյուն կրնար խաղաղություն պարգևել իր խոցոտված սրտին և փոթորկահույզ հոգիին համար:

30 տարիներու դժնդակ պայքարներե և մաքառումներե ետք, 15 հազար հայ զինյալներուն խուճապահար փախուստը Էրզրումեն տանելի պատահար մը չէր մեծ դյուցազնին համար: Ֆրեզնոյի այգիներու և մրգաստաններու խաղաղությա-

---

[56] *Ա. Թերզիպաշյան. նշվ. աշխ., էջ 399:*

[57] *Նույն տեղում, էջ 404–405, Եղ. Քաջունի. Անդրանիկի և հայկական առանձին հարվածող զորամասի հետ, էջ 200, Գ. Ղարիբջանյան. նշվ. աշխ., էջ 171, Ա. Չելեպյան. նշվ. աշխ., էջ 648, 654:*

[58] *Եղ. Քաջունի. Անդրանիկի և հայկական առանձին հարվածող զորամասի հետ, էջ 201:*

[59] *Ա. Թերզիպաշյան. նշվ. աշխ., էջ 397–398:*

նը մեջ ան պիտի ողբար իր երազներուն փշրվիլը բերդաքաղաքի փշաթելերուն և խրամատներուն մեջ: Միակ սփոփանքը, որ մնացած էր իրեն այն էր՝ թե Մայր Հայաստանի վերջին պատառիկը մտած ըլլալով հզոր Ռուսաստանի հովանավորության տակ, պիտի կրնար այնուհետև իր գոյությունը պահպանել, և բարգավաճիլ խաղաղության մեջ»[60]:

Զորավար Անդրանիկը, հեռավոր ԱՄՆ-ից ողջունելով Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը, նշել է. «Բարեբախտաբար [հայության] մյուս մնացած կեսն ալ խոհեմություն ունեցել է կարմիր դրոշակ պարզելու և կանգ առնել տալու թուրք հայաջինջ գրոհը»: Իսկ Խորհրդային Հայաստանի ղեկավարների մասին արտահայտվել է՝ ասելով. «Լավ տպավորություն և մի անուշ համակրանք թողած են հանրապետության վարիչները մինչև հիմա»[61]: Պատմական Հայրենիքի 1/10 հողատարածքի վրա իր գոյությունը հերոսների արյան գնով նվաճած և թեկուզ խորհրդային կարգավիճակով փրկված ու պահպանված Հայաստանին սատարելու մասին Զորավարի հավատամքը պարզից էլ պարզ է և բոլոր ժամանակների համար պատգամի արժեք ունի. «Այժմ բազմաչարչար և հալածված հայ ժողովուրդը ունի իր հայրենիքը… Պետք է ուժ տալ Հայաստանի շինարարական ձեռնարկներուն և զորացնել զայն՝ իբրև մեր ապագա հույսերու խարիսխը…»[62]:

Ուստի, հաստատվելով ԱՄՆ-ում և արժանանալով համայնքի «համակրալից» ընդունելությանն ու վերաբերմունքին, Անդրանիկն ամեն կերպ շարունակել է իր հայրենանվեր առաքելությունը՝ «սատարելու համար հայ ժողովուրդի նյութական ու բարոյական բարձրացման, որբ և աստանդական Հայը կապելու համար մայր հայրենիքին»[63]:

1920–1927 թթ. Անդրանիկը մշտապես առանձնակի ոգևորությամբ է ընդունել խորհրդային Հայրենիքից Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ), Կարմիր Խաչի և այլ պատվիրակությունների այցը ԱՄՆ[64], համագործակցել և ուղորդել դրանց արտերկրի մասնաճյուղերի գործունեությունը:

Քանի որ Անդրանիկի ղեկավարած «Փրկության հանգանակության» կենտրոնական հանձնաժողովի գործունեությունը 1921 թ. համընկել է նույն տարվա սեպտեմբերին ՀԽՍՀ ժողկոմխորհի դեկրետով ստեղծված և իր մտերիմ բարեկամ Հովհ. Թումանյանի ղեկավարած ՀՕԿ-ի գործունեությանը, Զորավարն իր գլխավորած «Փրկության հանգանակության» մարմինները վերանվանել է Հայրենիքի վերաշինությանն աջակցող հանձնաժողովների, որոնք փաստացի վերած-

---

[60] *Ա. Չելեպյան. նշվ. աշխ., էջ 648:*
[61] *Գ. Ղարիբջանյան. նշվ. աշխ., էջ 171:*
[62] *Նույն տեղում, էջ 167:*
[63] *Գ. Գուտուլյան. նշվ. աշխ., էջ 37, Մ. Ավետյան. նշվ. աշխ., էջ 224:*
[64] *Գ. Ղարիբջանյան. նշվ. աշխ., էջ 174:*

վել են ՀՕԿ-ի արտասահմանյան մասնաճյուղերի: Հովհ. Թումանյանի մահից հետո ևս Անդրանիկը շարունակել է համագործակցել ՀՕԿ-ի ղեկավարության հետ[65]: Այսպես, ՀՕԿ-ի ղեկավար Գրիգոր Վարդանյանին հասցեագրած նամակներից մեկում Անդրանիկը գրել է. «Հայաստանի մեջ բնակարաններ շինելու նպատակով Նյու Յորքի մեջ հանձնախումբ մը կազմվել է: Լսելով այս կոչը, ընդհանուր մեծ հույսն ունիմ, որ Ամերիկայի մեջ գտնվող գիտակից հայ ժողովուրդը դարձյալ ընդառաջ պիտի երթա յուր հայրենիքի վերաշինելու գործի մեջ: Ասով թե յուր խղճին բավարարություն պիտի լինի և թե Ձեզ քաջալերած: ԱՆԴՐԱՆԻԿ»[66]:

1926 թ., երբ Հայաստանից ՀՕԿ-ի պատվիրակներ Գրիգոր Վարդանյանը, Կարեն Միքայելյանը, բժիշկ Սպանդար Կամսարականը ժամանել էին ԱՄՆ, նպատակ ունենալով ի նպաստ Հայրենիքի վերաշինության սերտացնել կապը ԱՄՆ-ի հայ գաղթավայրի և Խորհրդային Հայաստանի միջև, Անդրանիկը նրանց ողջույնի նամակ է հղել Նյու Յորք՝ մասնավորապես նշելով. «Ուրախությամբ կարդացի թերթերուն մեջ այն գեղեցիկ և գործնական կոչը Հայաստանի վերաշինության համար, որ կազմված էր Նյու Յորքի մեջ հարգելի ազգայիններե մասնախումբ մը, ուղղված բոլոր Ամերիկայի հայության, ի նպաստ հայրենիքի վերաշինության մեծ գործին: Հուսով եմ, որ Ամերիկայի բովանդակ հայությունը գիտակցությամբ ընդառաջ պիտի երթա լիառատ նյութական աջակցությամբ: Ի սրտե կմաղթեմ կատարյալ հաջողություն:

Եգիպտոսի հայ գաղութը ինձ նվիրած է սուր մը, գեղեցիկ արվեստ մը կա շինության մեջ: Արդ բարեբախտություն ունիմ Ձեզի հետ ուղարկելու Հայաստան, որպեսզի իմ ցանկությանս համաձայն, նվիրել Հայաստանի թանգարանին, որուն համար խնդրում եմ ընդունեք իմ խորին շնորհակալությունը: Մոտ ժամանակի մեջ Ձեզի պիտի ուղարկեմ Նյու Յորք:

Հաճեցեք թարգման ըլլալ և իմ սիրելի բարևներս հաղորդել ալևոր Արարատի հովանիին տակ գտնվող ստեղծագործող ժրաջան ու աշխատող Հայաստանի պետական պաշտոնյաներուն, իմ հայ ժողովրդին և Հայաստանի զմայլելի ծաղիկներուն՝ հայ որբերուն:

Ընդունեցեք իմ սիրալիր հարգանքները բոլորիդ: Ձերդ հարգանոք ԱՆԴՐԱՆԻԿ»[67]:

Արդեն 1927 թ. Լոս Անջելեսում կայացած հանդիպման ժամանակ Զորավարը հանդիսավոր կերպով ՀՕԿ-ի պատվիրակ Գր. Վարդանյանին է փոխանցել 1919 թ. եգիպտահայերից նվեր ստացած ոսկեպաճույճ սուրը, որպեսզի այն հանգրվա-

---

[65] *Ա. Ն. Մնացականյան, Հ. Ղ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 261:*
[66] *Նույն տեղում, էջ 262–263:*
[67] *Նույն տեղում, էջ 263, 264:*

նի Հայաստանի պատմության թանգարանում: (Ի դեպ, ԱՄՆ-ում այն գնահատվել էր 25.000 դոլար)[68]: Սուրը փոխանցելու հանդիսությանը ելույթ ունենալով 1.500-անոց հայ և օտար բազմության առաջ՝ Զորավարն ասել է. «Հայ ժողովրդի ողբերգությունը ոճրագործ մեծ պետությունների սարքած դավի արդյունքն էր, և մեր ազգային հեղափոխականները նրանց կույր գործիքը դարձան: Այսօր խորհրդային իշխանության իմաստուն վարիչները, կոթած Խորհրդային Միության ուժին ու հարևանների եղբայրական հարաբերություններին, տանում են հայ ժողովուրդը խաղաղության, ապահովության և շինարարության ուղիներով: Դատապարտելով անցյալի բոլոր սխալները, այսօր ցած եմ դնում սուրս, որի տեղն այսուհետև կարող է լինել պատմական թանգարանը»[69]:

Այդ խորհրդանշական քայլով իմաստուն և հեռատես ազգային հերոսը միաժամանակ կոչ էր անում Խորհրդային Հայաստանի նկատմամբ ընդդիմադիր կեցվածք որդեգրած արտերկրի առանձին հայկական կազմակերպություններին ևս իրենց գաղափարաքաղաքական «զենքերը» վար դնել և ամեն կերպ սատարել Մայր Հայրենիքի առաջընթացին:

Անդրանիկը, որը տարիներ շարունակ տեսել էր օգնության կարոտ հայ որբերի ու այրիների վիճակը, չէր կարող հանգիստ ապրել բարեկեցիկ միջավայրում: Ահա թե ինչու շրջագայել է ԱՄՆ-ի հայաշատ քաղաքներով և ամերիկահայերին կոչ արել օգնել թշվառության դեմ մաքառող հայրենակիցներին՝ որբերին, գաղթականներին: Քարոզչական այդ գործունեության ընթացքում Զորավարի առողջությունը գնալով վատթարացել է, և նա ստիպված է եղել հանգրվանել տարբեր քաղաքներում բնակվող իր բարեկամների, մտերիմների տանը[70]:

1927 թ. գարնանը Բոստոնում Անդրանիկը սրտի տագնապ է ունեցել, սակայն, անգամ այդ ժամանակ և ամռանը նրա բոստոնյան «սրտառուչ զրույցների թեման հայրենիքի կարոտն էր, հայ որբերի, ազատագրական կռիվներում զոհված հերոսների այրիների, անուշադրության մատնված իր զինվորների վիճակը»[71]:

Մահվանից երեք շաբաթ առաջ՝ 1927 թ. օգոստոսի սկզբին, Կալիֆոռնիայում իր պատվին կազմակերպված ճաշկերույթի ժամանակ Անդրանիկն արտերկրի հայրենակիցներին հորդորել է բարյացակամ վերաբերմունք ունենալ Հայաստանի նկատմամբ. «Պետք է բարյացակամ ըլլալ Հայաստանի ներկա կառավարության հանդեպ» և ամեն կերպ աջակցել Հայաստանի վերաշինությանը[72]:

---

[68] *Ա. Թերզիպաշյան. նշվ. աշխ., էջ 411, Ա. Չելեպյան. նշվ. աշխ., էջ 642, 643, Գ. Ղարիբջանյան. նշվ. աշխ., էջ 173, Ա. Ն. Մնացականյան, Հ. Ղ. Հակոբյան. նշվ. աշխ., էջ 263:*

[69] *Գ. Ղարիբջանյան. նշվ. աշխ., էջ 173:*

[70] *Եղ. Քաջունի. Անդրանիկի և հայկական առանձին հարվածող զորամասի հետ, էջ 201:*

[71] *Ա. Թերզիպաշյան. նշվ. աշխ., էջ 401, Գ. Ղարիբջանյան. նշվ. աշխ., էջ 175:*

[72] *Գ. Ղարիբջանյան. նշվ. աշխ., էջ 174:*

Վերջին անգամ Նյու Յորքում, մտերիմների հետ խոսելով կյանքի ու մահվան մասին, քաջ Զորավարը, որը մահից չէր վախենում, այլ Հովհ. Թումանյանի իսկ բնորոշմամբ՝ «Անդրանիկ վախնալե միայն կվախնա»[73], ասել է. «Ավելի աղեկ է չվախնալով մեռնիլ, քան թե վախնալով ապրիլ»: Ապա շարունակել է. «Մենք բոլորս ալ մահկանացուներ ենք… Մահվանս պարագային մարմինս ոչ մեկուն կպատկանի. կպատկանի հայ ժողովուրդին, իմ անձնվեր ու զոհաբերող զինվորներուն. Հայաստանին… Չեմ փափաքիր որ վրաս ճառախոսություններ ըլլան, և փոխան ծաղկեպսակի դրամական նվերները հատկացվին իմ զրկված, վիրավոր ու անկար զինվորներուն և իրենց ընտանիքներուն»[74]:

Զորավար Անդրանիկի ապրած իմաստալից կյանքի և հայրենիքի ազատագրությանը նվիրաբերած գործունեության տրամաբանական փափագն էր ամփոփվել հայրենի հողում: Այդ մասին նա ասել է. «Կուզեմ, որ իմ աճյունս հանգչի Արաքսի ու Զանգվի ափին, իմ սիրելի ժողովրդիս մեջ, որուն ազատության համար կռվեցա»[75]: Ուստի քաջ հերոսը տիկնոջը կտակել էր. «Նվա՛ղդ, եթե այդ ցավը զիս տանելու ըլլա, չըլլա որ մոռնաս իմ փափաքը և զիս օտար հողի վրա թողուս. իմ մարմինը անպատճառ Հայաստան փոխադրե»[76]:

Համայնքային շրջագայությունից վերադառնալով Ֆրեզնո՝ Անդրանիկը փորձել է Չիքոյի հանքային տաք ջրերում վերականգնել իր առողջությունը, սակայն 1927 թ. օգոստոսի 31-ին դադարել է բաբախել «անզուգական հերոսի սիրտը՝ որ վախ չճանչցավ, ու անընդհատ բաբախեց իր ժողովուրդին համար…»: Զորավարի վերջին խոսքերն էին. «Ափսո՛ս, գործս կես մնաց…»[77]:

Սեպտեմբերի 7-ին Ֆրեզնոյի հայկական փոքրիկ եկեղեցում տեղի է ունեցել Զորավար Անդրանիկի հուղարկավորությունը, որին ներկա էին ավելի քան 10.000 հայեր, ինչպես նաև՝ օտարներ, այդ թվում՝ Ֆրեզնոյի քաղաքապետը և կառավարիչը: Զորավարի վերջին հրաժեշտը տեղի է ունեցել հայ ու ամերիկացի սպաների զինվորական պատիվներով[78]: Անդրանիկի աճյունը ժամանակավորապես ամփոփվել է Ֆրեզնոյի «Արարատ» հայկական գերեզմանատանը, ապա՝ Հայաստանում հանգրվանելու կարգադրությամբ փոխադրվել Նյու Յորք, որտեղ ամերիկյան եպիսկոպոսական եկեղեցում տեղի է ունեցել քաղաքացիական հոգեհանգիստը: Սակայն 1928 թ. հունվարի վերջին Զորավարի հարազատների և

---

[73] *Եղ. Քաջունի. Անդրանիկի և հայկական առանձին հարվածող զորամասի հետ, էջ 201, Ա. Թերզիպաշյան. նշվ. աշխ., էջ 402:*

[74] *Ա. Թերզիպաշյան. նշվ. աշխ., էջ 403, Եղ. Քաջունի. Անդրանիկի և հայկական առանձին հարվածող զորամասի հետ, էջ 201:*

[75] *Գ. Ղարիբջանյան. նշվ. աշխ., էջ 175:*

[76] *Ա. Թերզիպաշյան. նշվ. աշխ., էջ 408:*

[77] *Եղ. Քաջունի. Անդրանիկի և հայկական առանձին հարվածող զորամասի հետ, էջ 202, Գ. Ղարիբջանյան. նշվ. աշխ., էջ 176:*

[78] *Ա. Թերզիպաշյան. նշվ. աշխ., էջ 414–415, Գ. Գուտուլյան. նշվ. աշխ., էջ 38:*

զինակիցների ուղեկցությամբ շոգենավով Անդրանիկի աճյունը Հայաստան տեղափոխելիս քաղաքական դրդապատճառներով, այնուամենայնիվ, հնարավոր չի եղել այն հասցնել Հայրենիք, այլ փոխադրվել է Փարիզ, որտեղ հունվարի 29-ին 7.000 ներկաների, ինչպես նաև Ֆրանսիայի նախագահի գրասենյակի և Զինվորական նախարարության աշխատակիցների մասնակցությամբ վերաթաղվել է տեղի Պեր Լաշեզ գերեզմանատանը[79]:

1945 թ. նոյեմբերին աշխարհասփյուռ շապինգարահիսարցիների հայրենակցական միության հանգանակություններով Փարիզում Անդրանիկի գերեզմանին կանգնեցվել է հուշարձան[80]:

Զորավարի համար դժվար է եղել համակերպվել օտարության մեջ ապրելու փաստի հետ, երբ ողջ գիտակցական կյանքը նվիրաբերել էր հայրենի երկրի ու ժողովրդի ազատագրմանը, առավել ևս՝ հանգչել օտար հողի վրա: Այդ մասին սփյուռքահայ մտավորական Գ. Գուտուլյանը գրել է. «Ապրիլ անհյուրընկալ, խորթ և հիշատակ ու սրբություններ չունեցող հողի մը վրա, միշտ երազելով, բաղձալով և ապրելով հայրենի երկիրը, որուն համար կռվեցավ և որուն հողը արյունով ոռոգվեցավ, խիստ դժվար էր հերոսին համար»: Թեև՝ «Մեռնիլ գիտցողները կ՚ապրին լավագույն կյանքը», սակայն՝ «Մեռնիլ՝ Հայրենիքեն հեռու, օտար հողի վրա, մահ է հայրենասեր հերոսի համար»: Ուստի հեղինակի եզրակացությունը հետևյալն է. «Հայ ժողովուրդը միայն մեկ տեղ ունի իր պաշտած հերոսին համար, Հայաստան. ուր կրնա հանգիստ առնել հերոսին մարմինն ու հոգին»[81]: Ինչը, որ տեղի ունեցավ 2000 թ., երբ Անդրանիկի աճյունը փոխադրվեց Հայաստան և հանգրվանեց Եռաբլուրի պանթեոնում:

Արտերկրում իր հայրենի երկրի ու ժողովրդի համար հանգանակություններ կազմակերպելուց բացի, Անդրանիկը նաև թղթին է հանձնել ու հրատարակել իր վկայությունները և օրագրությունները՝ նպատակ ունենալով պատմության և գալիք սերունդների անաչառ դատաստանին ներկայացնել անցած ռազմական ողջ գործունեությունը, ինչպես նաև՝ պատասխան տալ ՀՅԴ կուսակցության կողմից իր հասցեին արվող մեղադրանքներին: Զորավարն անձնական մտածումները հրատարակել է առանձին գրքերով՝ «Զոր. Անդրանիկ կը խոսի» (Փարիզ, 1921), «Զորավար Անդրանիկի Կովկասյան ճակատի պատմական օրագրությունը. 1914–1917, Օրագրված զորավարին թիկնապահ զինվորեն» (Բոստոն, 1924) և այլն:

---

[79] *Եղ. Քաջունի. Անդրանիկի և հայկական առանձին հարվածող զորամասի հետ, էջ 202, Գ. Ղարիբջանյան. նշվ. աշխ., էջ 179, 180, Ա. Ն. Մնացականյան, Հ. Ղ. Հակոբյան. նշվ. աշխ., էջ 285, Գ. Գուտուլյան. նշվ. աշխ., էջ 39:*

[80] *Գ. Ղարիբջանյան. նշվ. աշխ., էջ 202:*

[81] *Գ. Գուտուլյան. նշվ. աշխ., էջ 3, 38:*

Իր գրվածքներում Անդրանիկը քննադատել է ՀՅԴ գործունեությունն ազգային գրեթե բոլոր ասպարեզներում՝ Կ. Պոլսի Ազգային Պատրիարքության և ընդհանրապես հայ հոգևորականության նկատմամբ նրանց դիրքորոշումը, հայ ընտանեկան արժեքների ազատականացմանն ուղղված նրանց քարոզչությունը, տնտեսական կյանքում իրականացրած բռնությունները, հայ զինվորականությանը օսմանյան բանակ զորակոչել տալը, Ռուսաստանի դեմ հանդես գալը և այլն[82]*: Ապա եզրակացրել է. «…Ես մեկ իտեալ և մեկ նպատակ ունեի. հարվածել մեր դարավոր թշնամին: Ասկե դուրս ո՛ևէ պետության կամ կառավարության դեմ շարժումի մը հակառակ մնացի մինչև վերջ:*

Իսկ Դաշնակցությունը փոխվեցավ հազար ուղղության: Օր մը ռուսասեր էր, մյուս օր ռուսատյաց. օր մը թուրքերու թշնամին էր, մյուս օր անոնց բարեկամ. օր մը անգլիասեր էր, մյուս օր կպոռար «Անկցի Անգլիա». օր մը Պարսկաստանի բարեկամն էր, մյուս օր կկռվեր անոր դեմ:

Այս հանգամանքը միայն ցույց կուտա թե Դաշնակցությունը զուրկ էր այն հեռատեսութենեն և իմաստութենեն, զոր անպայման պետք է ունենա ժողովուրդի մը ճակատագրին հետ խաղացող ո՛ևէ անհատ կամ կազմակերպություն:

Ղեկը կորսնցուցած մարմին մը ի՞նչպես պիտի կրնար ղեկավարել ազգ մը:

Ահա թե ինչո՞ւ համար մեր ազգը առաջնորդվեցավ աղետե աղետ և դժբախտութենե դժբախտություն»[83]*:*

ԱՄՆ-ում մեծ Զորավարը հայրական գորովանքով է վերհիշել իր սիրելի զինվորներին: Այսպես, 1924 թ. հունիսի 18-ին Ֆրեզնոյում, հանդես գալով համայնքի առջև, նա գնահատանքի ու երախտագիտության պատմական դարձած խոսքն է ուղղել «իր այն զինվորներուն, որոնք մինչև վերջ կանգնեցան իր կողքին և կերտեցին Հայուն փառքը»՝ այն հույսով, որ «օր մը միգուցե այդ զոհաբերումները պետքի մը ծառայեն»[84]*:*

«ՀԱՐԳԱՆՔԻ ՀԱՄԱՐ (Զինվորներուս)» վերտառությամբ գրության մեջ, Զորավարը, հակառակ պատմաքաղաքական անխուսափելի հանգամանքների բերումով հայրենի երկրում ստեղծված անվերահսկելի հանգամանքներին, բարձր է գնահատել հայ զինվորի անձնուրաց նվիրումը հայրենիքին ու ժողովրդին, որոնց անօրինակ քաջությունը հիացրել և զայրացրել է ինչպես Արևմուտքի երկրների ղեկավարներին ու զինվորական հրամանատարությանը, նույնպես և անգամ թշնամուն: Անդրանիկի իսկ բնորոշմամբ՝ մարտական գործողություններից բացի, հայ կամավոր զինվորականությունը դարձել էր նաև որբերի ու գաղթական-

---

[82] *Զոր. Անդրանիկ կխոսի, Փարիզ, 1921, էջ 14–15:*

[83] *Նույն տեղում, էջ 15–16:*

[84] *Գ. Կարինյան. Ազգային հերոս Զոր. Անդրանիկ և իր պատերազմները. Զոր. Անդրանիկ Էրզրումի ճակատին վրա, Փարիզ, 1953, էջ 190:*

ների պաշտպանն ու ապավենը, ինչպես նաև ռուսական զորքի առաջապահ «Լապտերները» ՝ իրենց կյանքով լուսավորելով հայրենի տարածքների ազատագրման սրբազան ճանապարհը[85]:

Այդ տեսակետից բոլոր ժամանակների համար բնութագրական և ուղենշային է դեռևս 1918 թ. Զորավար Անդրանիկի ՝ իր երիտասարդ ու պատանի զինվորներին (նրանց մեջ 12–14 տարեկան երեխաներ էլ կային) ուղղված հետևյալ խոսքերը, որով նրանց կռվի էր առաջնորդում. «…Աշխարհի մեջ միս մինակ ենք: Բավական է, որ այդ մինակության մեջ մենք զրահ և պողպատ հագնինք: Ռուսը գնաց, ան մեր հայրենիքը մեզի թողուց: Թուրքը կ՚սպառնայ գալ և մեր հայրենիքը մեր ձեռքեն խլել, չթողունք, որ թուրքը իր ձեռքերը մեր արյունով ներկե: Ստեղծենք մեր հայրենիքը և տերը ըլլանք մեր ընտանիքին, ջուրին, հողին ու քարին: Կեցցե՛ մեր բանակը, որ ազատության համար կկռվի, կեցցե՛ մեր նահատակությունը: Տա Աստված, որ մենք մեր հավատքին մեջ մինակ չըլլանք»[86]:

Անդրանիկ Օզանյանն իր ողջ կյանքում հնարավոր բոլոր միջոցներով պայքարել է ազգի թշնամիների դեմ, ծառայել հայրենի հողի ազատագրման և ժողովրդի ազատության համար: Քաղաքական ստիպողական հանգամանքների բերումով հայտնվելով օտարության մեջ, այնուամենայնիվ, նա չի քաղաքականացրել իր հարաբերությունները Հայաստանի ինչպես դաշնակցական, այնպես էլ խորհրդային իշխանությունների հետ: Ընդհակառակը, երբ Զորավարի հողապահպան պայքարը միջազգային ուժերի կողմից կասեցվեց, և նրա գործը, իրոք, որ կիսատ մնաց, այդուհանդերձ, հայտնվելով պանդխտության մեջ, նոր պայմաններում նա շարունակեց նպաստել այժմ արդեն ազգի գենոֆոնդի փրկությանը ՝ տարագրության մեջ հայտնված գաղթականության դեպի հայրենի ազատագրված տարածքներ ներգաղթեցնելուն, տեղավորելուն ու երկրում թշվառության հաղթահարմանը: Արտերկրում կազմակերպելով պարբերական հանգանակություններ և հանդես գալով հայաստանակենտրոն ելույթներով ու գրվածքներով ՝ ազգային հերոս Անդրանիկը շարունակել է իր հայրենանպաստ ու ազգանվեր առաքելությունը ՝ սկիզբ դնելով սփյուռքի վերածված հայության սերունդները նորաստեղծ Հայաստանի հետ կապելու գործընթացին:

ДЕЯТЕЛЬНОСТЬ ПОЛКОВОДЦА АНДРАНИКА ОЗАНЯНА ЗА ГРАНИЦЕЙ (1919–1927 гг.)

КНАРИК АВАКЯН

[85] *Զորավար Անդրանիկի Կովկասյան ճակատի պատմական օրագրությունը. 1914–1917, Օրագրված զորավարին թիկնապահ զինվորեն, Բոսթոն, 1924, էջ 197:*

[86] *Ա. Ժամկոչյան. նշվ. աշխ., էջ 84:*

Р е з ю м е

Армянский национальный герой полководец Андраник Озанян всю свою жизнь боролся против внешних и внутренних врагов своего народа, за освобождение родной земли. Вынужденно оказавшись за границей, он не стал политизировать свои отношения как с дашнакской, так и с советской властями Армении. В новых условиях Андраник начал содействовать репатриации и спасению армян, находившихся в изгнании, организовал сбор денег и всячески поддерживал Армению.

THE ACTIVITIES OF GENERAL ANDRANIK OZANYAN ABROAD (1919–1927)

KNARIK AVAGYAN

S u m m a r y

Armenian national hero General Andranik Ozanyan all his life struggled against the outside and inside enemies of his people, for the liberation of the native land. As a result of compulsory circumstances finding himself abroad, he didn’t start to politicize his relations with the Dashnak and later with the Soviet authorities. In new conditions he assisted the repatriation and salvation of the exiled Armenians, organized fundraisings and supported Armenia in every possible means.